



ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ

ՄԵԺՆ ՆԵՐՍԵՍ ՊԱՐԹԵՎ ՀԱՅՐԱՊԵՏ

(ԵՐԻՏԱՍԱՐԳՈՒԹՅՈՒՆԸ)

Ա.

Ներսես Պարթևի մասին խոսելու ժամանակ երբեք մոռնալու չենք, որ ան հայ Արշակունի թագավորական ընտանիքի անդամ էր, Լուսավորչյան ընտանիքի միակը, որուն մայրը Արշակունի արքայադուստր էր, նաև մեծ մայրը՝ Արշակունի արքայադուստր¹:

Այս իրողության քաջածանոթ ըլլալու էր նաև շարականագիրը, երբ Ներսեսին նվիրված շարականի մեջ կգրեր «...Ողորմելով որդւոց Արամայ, Եստու յագգէն Արշակունեաց հովիւ ընտրեալ զՍուրբն Ներսէս...»:

Արշակունիները գրեթե հինգ հարյուր տարի իշխեցին Պարսկաստանի մեջ՝ մինչև Սասանյաններու երևան գալը և երեք հարյուր տարի՝ Հայաստանի մեջ, Հաչս երկու պետութեանց ժողովուրդներու՝ Արշակունի անունը անտարակուսելի նվիրականութիւն մը ստացած էր, որ Արշակունին աստվածներու հաւասար կղարծներ:

Զորրորդ դարու նշանավոր պատմաբան Ամմիանոս Մարկելենոս կվկայե այս մասին, Էրբ կգրե. «Պարթևները Արշակը կհարգեին որպես աստված մը, և իրենց պաշտամունքը հանդես իրեն յայնքան հառաջ գացած էր, որ մինչև մեր օրերը, միմիայն Արշակի սերունդեն մարդ մը, եթե որեւէ տեղ կա հատ մը, նախընտրելի է գահուն համար քան ուրիշները: Նույնիսկ քաղաքային կոիվներուն, որ շարունակ կպատահի իրենց մեջ, ամեն անձ սրբապղծութիւն կհամարե ձեռք բարձրացնել Արշակունիի մը, հոգ չէ թե սա զինված է կամ պարզ քաղաքացի մը»²:

Նույնը և ավելին Հայաստանի մեջ:

Երբ Ներսեսի պատանեկան տարիներու անմիջական միջավայրը նկատի առնես, կրես, թե անհավանական է, որ այս դեռատի իշխանը օր մը եկեղեցական ասպարեղ մտնէ: Հեշտամոլ, ցոփ հոր զավակ էր Ներսես, հեշտամոլ, ցոփ հորեղբոր մըն ալ օրինակը աչքին առջև:

¹ Փալատոս Բյուզանդ, Գ 19, Դ 3:

² Ամմիանոս, ԻԳ, 6 6:

Սակայն ներսեսի ամբողջական կյանքը ուսումնասիրելու, կեղբարակացնես, թե ներսես Դ դաժու Հայաստանի խղճատանքն էր, արժանի իր մեծություն, ա՛լ ավելի արժանի իր իրավ սրբություն:

Մեծ էր ներսես որպես պետական գործիչ, սուրբ՝ որպես քրիստոնյա հայրապետ:

Ներսեսով կսկսի Հայ Եկեղեցվո ամբապինդ կազմակերպումը և կաթողիկոսական հեղինակության բարձրանալը: Իրմե առաջ, որքան կրոնական նույնքան ալ եկեղեցական անկազմակերպ վիճակ մը կտիրեր երկրի մեկ ծայրեն մյուսը: Արքունիքը և ազնվականությունը, եթե ոչ բոլորովին գործոն թշնամությունմբ, գոնե արհամարհական անտարբերությամբ կվերաբերեին դեպի Եկեղեցին և անոր Պետը:

Քրիստոնեությունը հասարակ ժողովուրդի աչքին նորաձևության պես բան մըն էր: Փալատոսի բառերով, «մարդկային մոլություն մը», որուն մոդան ուշ կամ կանուխ կանցնեի, և իրենք, խելքերին տուն եկած, կրկին կդառնային իրենց հազարամյա Արամազդին և Անահիտին:

Եվ իրավ ալ, երբ հոր արքա Տրդատի կյանքին վերջ կտրվեր թույնով, արդեն մակընթացությունը կսկսեր: Որոշապես շնք գիտեր, թե դավադրող նախարարներն ի՞նչ պատճառով սպանեցին Տրդատը: Բայց կըրնանք հավանական համարել, թե մեծ արքային արմատական, կտրուկ և բռնի ձեռնարկները հին դարավոր կրոնը փնջելու, համառ ընդդիմության բախեցան ու միայն քրմական դասին, այլ մանավանդ ավագանիին:

Այն պարագան, թե Գրիգոր Լուսավորչին իսկ վերջեն բոլորովին կբաշվի հրապարակին, հավանաբար իրավունք կուտա մեզի ենթադրելու, թե նոր կյանքին դեմ համառ և շարունակական դիմադրություն կար:

Տրդատեն և Գրիգոր Լուսավորչին վերջ, նորամուտ կրոնը հազիվ կպահեր իր գոյությունը Հայաստանի մեջ: Ս. Գրիգորի հաջորդներու կյանքն անգամ վտանգի մեջ էր: Լուսավորչի հաջորդը՝ Արիստակես կաթողիկոս կսպանվիր հայ իշխանի մը կողմի: Հաջորդը՝ Վրթանես, հազիվ կազատեր դավադրներու մահափորձեն: Վրթանեսի երկվորյակ զավակներեն առաջինը՝ Գրիգորիս եպիսկոպոս կնահատակվիր, իսկ Հուսիկ կաթողիկոս, Տիրան թագավորի հրամանով և անոր իսկ ներկայությամբ, զավագաններու հարվածին տակ հոգին կավանդեր եկեղեցվո մեջ:

Ահա այսպիսի պայմաններու մեջ Հայրապետական Աթոռը պիտի գրավեր ներսես

341 կամ 342 թվականին³, ծանոթ՝ իր նախորդներուն վիճակված տխուր ճակատագրին:

Իսկ ներսես ա՛լ ավելի գիտակ էր Եկեղեցվո անկյալ, ողբալի վիճակին: Հեթանոսական մառախուղն էր, որ կփորձեր վերադառնալ քրիստոնեական խունկը կլանելու:

Երիտասարդ հայրապետը, Քրիստոսի վարդապետության բարձրագույն սկզբունքներով զրահավորված, ասպարեզ պիտի նետվեր՝ պայքարելու բազմազխանի շարիքին դեմ:

Որպեսզի ավելի որոշ հայտնած ըլլամ միտքս, ըսեմ, որ եթե Գրիգոր Լուսավորչի Հայաստանի քրիստոնեության Հիսուսն էր, ներսես անոր Պողոս առաքյալը եղավ, որ նորահաստատ Եկեղեցին պիտի օծտեր կուռ կազմակերպությամբ, և իր իսկ օրինակով ներշնչեր այն բազմաթիվ հոգևոր մշակները, որոնց պատրաստությունը իր գլխավոր աշխատանքներեն մին եղավ:

Ներսեսն էր, որ ոչ միայն Հայ Եկեղեցիին տվավ վարչական ուժեղ կազմակերպություն, կարգ-կանոն և ըրավ զայն բարոյական սկզբունքներու ներույժ գանձարան, այլ նաև նյութական հարստության ալ գանձարան, որով Եկեղեցին կունենար ընդարձակ հողեր և նյութական հնարավորություն ու միջոց հեղինակության աճման:

Կաթողիկոս Ներսեսի մեջ կա նաև պետական գործիչ Ներսեսը, որ հաճախ մոռացության կտրվի:

Ներսեսով՝ կսկսի հայ Կաթողիկոսության նաև քաղաքական ասպարեզի մեջ գործոն դեր ունենալը: Իրմե առաջ, եթե Վրթանես կաթողիկոսի մեջ կգտնենք քաղաքական գործունեության փորձեր, այդ առավելապես վերաբերելի է Խոսրով թագավորի թույլ անհատականության: Ներսեսն էր, որ կաթողիկոսը տարավ արքունիք, ու որպես Եկեղեցվո հայրապետը, այլ պետության գործունյա մեկ իշխանը կամ նախարարը: Թերեւս իր Արշակունի ըլլալու հանգամանքը մեծապես սատարեց իր հանդուգն գործունեության:

Իսկ իր զավկին՝ Սահակ կաթողիկոսի օրով, քաղաքական այս գործունեությունը կհասներ իր գագաթնակետին, Սահակը դարձնելով հինգերորդ դարու առաջին կեսին մեծագույն պետական գործիչը թագավորեն վերջ:

3 Այս թվականը բոլոր հայ բանասերներ և պատմաբաններ մերժված է: Անոնք առհասարակ 353 թվականը կընդունին որպես ներսեսի ընտրության տարին: Ըստ իս, այս բոլորովին կամայական է: Այն հոգվածիս կառուցվածքը չի ներեր հոս արտահայտվի այդ մասին:

Հետագային ալ, երբ թագավորութիւնը կ'վերջանար, Կաթողիկոսարանը կ'ըլլար նաև տեսակ մը արքունիք:

Հայ Հայրապետութեան քաղաքական մարդի մեջ գործունեութիւնը պիտի շարունակէր դարերով, գրեթէ մինչև քսաներորդ դարու սկիզբը, շնորհիւ այն հզոր սկզբնավորութեան, որ Ներսէս և ապա Սահակ տվին անոր:

Այս հոգիվածով պիտի շխոսիմ Ներսէսի եկեղեցական և պետական մարդերու մեջ ունեցած գործունեութեան մասին: Պիտի փորձեմ ներկայացնել միմիայն իր երիտասարդական տարիները, մինչև իր Կաթողիկոսական Գահ բարձրանալը, անշուշտ ըսելիքներս հիմնավորելով աղբյուրներու ուսումնասիրութեան վրա:

Բ

Պատանի Ներսէսին ծանոթանալու ջանքիդ մեջ բնականաբար ուշադրութեանդ առարկա կ'ըլլա իր հայրը Աթանագինես, փնչպես, օրինակ, Սահակ Պարթևի կյանքը սերտելով՝ իր հայրը Ներսէս կաթողիկոս կ'բարձրանա մտքի ալքերովդ առաջ:

Սակայն երբ Ներսէսի հոր կդառնաս, կ'աչշիս կմնաս, և կ'բացականչես. «Այս ի՞նչ առաքինի պատու է, բայց ինչպիսի՞ շարաբարո ծառն է»:

Մանկեանքը երիտասարդ զինվորական Աթանագինես իշխանին, որ զավակն է Հուսիկ կաթողիկոսին:

Ան ամուսնացած է Տիրան թագավորի բրոջ հետ: Արքայական ընտանիքի փեսա ըլլալ, նույնիսկ թագավորին քեռայրը, բացառիկ պատիւ մըն է, որ բախտավոր փեսային փառասիրութիւնը անհուն կհրահրէ: Եթէ ան նկարագրի ընդոժին տոկունութիւն չունի, գոռոզ անգոսանքով կնայի իր երեկի հավատարմներուն: Կամայական սանձարձակ գործունեութիւն. եսին ինքնահավան պանծացում. ամբարտաւանութիւնը շփոթել արծառներին հետ, և մահկանացուները վարող պարտադիր օրենքներին վեր ըլլալու համոզումը կուգան փչացնել իր մեջ առաքնութեան դուզն մասնիկ մը՝ եթէ այդ գոյութիւն ունենը:

Աթանագինեսի պարագային՝ հոռեգույնները այս հատկանիշներուն տիրապետեցին իր անձին: Ան մոռցավ, ավելի ճիշտը, արհամարհական ծաղրանքով անտեսեց, թէ իր հայրը կաթողիկոս էր, իր պապը նույնպէս կաթողիկոս, իսկ իր պարուն հայրը՝ սրբացալ Գրիգոր Լուսավորիչ:

Հուսիկ կաթողիկոսի մահով Աթանագինես և իր երկվորակ եղբայրը Պապ ժառանգ կստանային կալվածային հսկա հարստու-

թիւն՝ Եկեղեցաց զավառի մեջ թիլ ավանը, որ Գրիգորի կալվածը եղած էր⁴, Գարանաղաց զավառի մեջ Թորդան գոլը, որ թաղված էին Գրիգոր, Վրթանես և Հուսիկ⁵: Ապա հոռնական ընդարձակ կալված ունեցած ըլլալու էին Հայաստանի առաջին Մայր Եկեղեցիի սրբազան վայր Արտաշատի մեջ:

Արշակունի արքայի փեսա, ադոր վրա ավելցուր սեփական հարստութիւն, Աթանագինեսի հաճոյամով կենցաղավարութիւնը մղեցին լարծուն զառկայրը ցոփութեան: Եվ ան իրեն հետ միասին բաշեց տարավ իր եղբայրն ալ:

Աթանագինես, «անխրատ ստահակ», իր «սնոտի ազնվականութեամբ և ազգակա-նութեամբ պարծենալով զինվորական կյանք ընտրեց»⁶: Եպիսկոպոսներ փորձեցին բռնի սարկավազ ձեռնադրել՝ երկու եղբայրները, բայց երկուքն ալ ընդվզեցան:

Զինվորական ասպարեզը չափազանց ձեռնտու կ'ըլլար Աթանագինեսի հեշտասիրութեան: Հազված, սոված, գոհարազարդ սուրը մեջքին, ան սոնքացող հերոսը կդառնար՝ բազմապիսի մարմնական հաճոյքներով վիտացող այն լայն ու լայն պողոտային, որ մանկութեան ատեն իր հոգևորական հորմեն լսած կրնար ըլլալ, թէ գոխք տանող ճամբան է:

Եվ Աթանագինեսը կըրջապատին «վարձակներ, գուսաններ և ծաղրածուներ»⁷:

Անառակութեանց մեջ թաթախուծ այսպիսի ցոփ հայր մը ինչքա՞ն մտահոգ կրնար ըլլալ իր զավկին կրթութեամբ: Ներսէս ալ ի սկզբնաւ զինվորական պիտի ըլլար, բայց իր հայրը պիտի շտեսներ այդ:

Գ

Արդոք ո՞վ էր, որ Աթանագինեսի այս որդին դեռ մանուկ հասակին Կեսարիա ղըրկեց: Ամենայն հավանականութեամբ մահկան մեծ հայրը՝ Հուսիկ կաթողիկոս: Իր երկու զավակներու ամբարիշտ կենցաղավարութենէն դառնացած, գիտնալով, որ անոնցմէ մին կամ մյուսը Հայրապետական Աթոռ պիտի չբարձրանա և աշդպիսով Գրիգորի ընտանիքը պիտի կորսնցնէ կաթողիկոսութեան ժառանգական իրավունքը, Հուսիկ իր հույսը կ'ապեց Աթանագինեսի որդւոյն, զայն ղըրկեց Կեսարիա, աղատելով անառակ հոր ազդեցութենէն:

Այն ատեն Կեսարիան, Կապադովկիոյ այս մայրաքաղաքը, հռչակավոր կրթական վա-

4 Փավստոս Բյուզանդ, Գ 2:

5 Փավստոս Բյուզանդ, Գ 2, 11, 12:

6 Փավստոս Բյուզանդ, Գ 13:

7 Փավստոս Բյուզանդ, Գ 19:

ուարան էր և Փոքր Ասիոյ ամենամեծ քաղաքը: Նորահաստատ Կոստանդնուպոլիսը դեռ չէր կրնար բաղդատուիլ անոր հետ: Բնակիչներուն ճիշտ թիվը որոշել դժվար է, բայց 260-ական թվականներուն, երբ Շապուհ Ա Սասանյան թագավորը գրավեց Կեսարիան, քաղաքը չորս հարյուր հազարի մոտ բնակչութիւն ունէր:

Մանուկ Ներսես ի բնն ուշիմ, արթնամիտ և գործունյա մեկն էր, կատարյալ հակապատկերը իր ստահակ հոր: Կեսարիո մեջ կարող քրիստոնյա դաստիարակներու խնամքին հանձնված, ան կատանար և կյուրացներ հիմնական ուսմունք՝ զարգացնելու իր միտքը, ի հայտ բերելու իր մեջ և ուղեգնու մարդասիրական առաքինութեանց կոկոնները, որ շատ շանցած, իր շահահասութեան, լիապայծառ ճոխութեամբ պիտի ծաղկեին Հայաստան աշխարհի հողին վրա, իր իսկ հարատև ջանքերով:

Որոշապես շնք կրնար ըսել, թե Կեսարիո դպրոցի քանի մը աշակերտները, որոնք հետագային բովանդակ քրիստոնյա մկեղեցւոյ հռչակավոր վարդապետներն և սուրբերն եղան, Ներսեսի դասընկերները եղած ըլլալին, զոր օրինակ, Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նյուսացի, ապա Գրիգոր Նազիանզացի: Ներսեսի աշակերտութեան ատեն անոնք դեռ փոքր էին. Բարսեղ ծնած էր 329-ին, Նյուսացին՝ 330-ին, Նազիանզացին՝ 329-ին: Բայց թե վերջէն Ներսես պիտի ճանշնար զանոնք, մանավանդ Բարսեղը, և անկե ներշնչվեր, կասկած չկա:

Բազմահարուստ ընտանիքի զավակ և Արշակունի իշխան, Ներսեսի դաստիարակութեան համար ծախք չէր խնայված: Ան շճաշակեց նյութական անձուկ պայմաններու շրջանի մտահոգութիւնը, որ իրմե հետո Կեսարիա, Պոլիս, Անտիոք և մեղսիա վազող ուսումնաստներ չհայ երիտասարդներու ամենուն վիճակվեցաւ:

Իր հոգին քրիստոնեական վարդապետութեան վսեմագուն սկզբունքներով օծուն, ան մշտարթուն աչքերով դիտեց նախ Կեսարիո և ապա Պոլսո մեջ գործնական ապացուցները քրիստոսի բարոյներու կիրարկման՝ դպրոց, եկեղեցի, հիվանդանոց, վանք և աղբատանոց: Տեսաւ, ազդվեցաւ, խանդավառվեցաւ և սիրեց հույժ, առանց մտքին իսկ անցնելու, թե օր մը ինքն ալ հոտի մը քրիստոնյա հովիւր պիտի ըլլար, պաշարելով իր շուրջի համատարած խաթարյալ բարքերու դեմ: Կեսարիո մեջ երբ ուսումը ավարտեց, Ներսես անցաւ Պոլիս: Երիտասարդ իշխանը Պոլիս կերթար ոչ թե ուսումը շարունակելու, այլ ամուսնանալու Ասպիոն

մեծ իշխանի աղջկան հետ⁸, իսկ հայոց Արշակ թագավորը՝ Արաբիոս իշխանի դուստր Օլիմբիային հետ կամուսնանար:

Դ

Երբ Ներսես իմացաւ, որ իր մորեղբոր որդին Արշակ Հայաստանի թագավոր եղած է, որոշեց վերադառնալ Հայրենիք:

Անոր Հայաստան հասնելուն, երիտասարդ թագավորը նույնքան երիտասարդ, գանգրահեր և վալելակազմ զարմիկին՝ Ներսեսին, զինվորական աստիճան կուտար և կնշանակեր արքունի սենեկապետ⁹:

Ներսես իր հարսին հետ Հայաստան գալու և արքունիքին մեջ բարձր պաշտոն ստանձնելու օրերուն Կաթողիկոսական Աթոռը թափուր էր:

Տիրան թագավորի հակառակութիւնը Լուսավորչի ընտանիքին՝ ծանոթ էր ամենուն: Սակայն Արշակ վարակված չէր հոր ատելութենէն: Իր գահակալութեան օրերուն, Հայաստանի քաղաքական խառնակ վիճակին զուգընթաց, խառնաշփոթ կացութիւն մ'ալ ստեղծված էր Հայրապետական Գահին շուրջ: Եւ որովհետեւ Արշակ թագավորի առաջին տարիներուն, անոր և իր խորհրդականներուն անմիջական ճիգն էր ներքին ճակատը խաղաղեցնել, բնականաբար ուշադրութիւն պիտի դարձնէր նաև եկեղեցական ճակատին: Վերջապես թագավորը ըսելիք ունէր կաթողիկոսի մը ընտրութեան մասին: Հիրավի, Դ դարուն արքան էր, որ կընտրէր հայրապետը:

Ահա երբ տարիէ ի վեր զինվորական Ներսես կվարեր իր թագավոր ազգականին սենեկապետի պաշտոնը: Իր շուրջիններուն համար այս երբե տարիները բավական եղան զննք ճանշնելու:

Երիտասարդին ուսումնական միտքը, բարոյական բարձր ըմբռնումները, գորովագութ սիրտը և անկաշառելի ազնիւ նկարագիրը զինք կարծես երկնառաք թեկնածուն կդարձնէին այն Գահին, որուն պատվանդանը իր նահատակյալ մեծ հայրը Հուսիկ արյունով լվացեր էր:

Արքունի տենեկապետը զարմացմամբ լսեց ամենուն բերնէն իր անունը, որպես միայլ

⁸ Խորենացի, Գ. 16.— Մեսրոպ Երեցի ժ դարու վերջերուն գրի առած կենսագրութեան մեջ ըսածը, թե Ներսես Կեսարիո մեջ կուսաներ իր կնոջ հետ միասին, որուն անունն էր Սանդուխտ, Մամիկոնյան ցեղէն, բոլորովին անըղծունելի է: Մեսրոպ Երեցին վեց հարյուր տարի առաջ գրող և Ներսեսի ու Մամիկոնյաններու մոլեռանդ ջատագով Փավստոսի բացարձակ լուսնութիւնը այդ մասին վճռական է:

⁹ Փավստոս Բյուզանդ, Գ. 3,

արժանավոր թեկնածուն կաթողիկոսության իր բողոքները խուլ ականջներու հանդիպեցան, իսկ բողոքովին չբացան, երբ Արշակ թագավոր առ այդ վճիռ արձակեց:

Ներսեսի կաթողիկոսացման արարողության առաջին մասը հուզիչ էր: Ներսես պիտի ղրկվեր Կեսարիա, բայց Կապադովկիո եպիսկոպոսապետին ներկայաճալու էր որպես հոգևորական և ոչ զինվորական պաշտոնյա: Ուստի հոն, բազմամբոխ արքունիքին մեջ, ամենուն աչքը իր վրա, մեջքեն քակեցին մարզարտազարդ ոսկի պատյանով սուրբ, հետո, բարձր հասակին այնքան վայել ականահաճո պատմուճանը առին վրային և անոր տեղ հագցուցին կրոնական սքեմը: Այդքանով չվերջացավ. Ներսեսի գանգուր մազերը կտրեցին, ծերունի եպիսկոպոսը սարկավագ ձեռնադրեց զինք¹⁰:

Կեսարիա ճամբորդությունը, 341-ին կամ 342-ին, հաղթական շքերթ մըն էր: Ներսեսին ընկերացող իշխանական կազմը ցույց կուտա, թե արքունի սենեկապետին ընտրությունը ընդհանուրի հավանության արժանացած էր: Միաժամանակ այդ նաև կնշեր թագավորի և նախարարներու միջև հաստատված հաշտությունը, ժամանակավոր զինադադարը:

Իշխանական շքախումբի մեջ էր Հայր Մարդպետը, որ քանի մը տարի վերջ այնքան մոլեգիլն բախում պիտի ունենար այս

միևնույն Ներսեսի հետ՝ եկեղեցական կալվածներու անօրինակ բազմաճանաչում և հայրապետական հեղինակության բացահայտ աճման պատճառով: Հոն էր Սյունյաց մեծ իշխան Անդովկ, որուն գեղանի դուստրը Փառանձեմ, Արշակունի արքունիքի մեջ հուղումնալի ելույթներու ողբերգական հերոսուհին պիտի ըլլար: Հոն էին Բագրատունյաց իշխան Բագրատ, Արշավիր Կամսարական, Մեհենդակ Ռշտունի, Պարգև Ամատունի, Մոփաց իշխան Դանիել¹¹:

Մեսրոպ Երեց (Ժ դար) Ներսեսին ընկերակցողներու մեջ քսանվեց իշխաններ աւնունեցով կհիշե, որոնց հետ նաև քսանութ եպիսկոպոսներ և շորս հազար հեծյալներ:

Այսպես, ուրեմն, Հայաստանի համար բոլոր նշանները բարեգուշակ էին: Երկու մոտիկ ազգականներ, Արշակ և Ներսես, երկուքն ալ երիտասարդ, գրեթե տարեկից, իրենց ձեռքերուն մեջ կառնեին Հայոց աշխարհի ճակատագրին թելերը:

Ակնկալելի էր, որ կատարյալ համերաշխություն տիրեր երկուքին միջև, և թագավորու կաթողիկոս ապագային որևէ բախում չունենային:

Ամենքը համոզված էին, թե Հայաստան բարեբաստիկ օրերու նոր շրջանի մը սեմին կգտնվեր: Այլ ո՞վ կրնար հոռետես մտքեր ունենալ...:

10 Փավստոս Բյուզանդ, Դ 3.

11 Փավստոս Բյուզանդ, Դ 4:

